



## ՍՈՒՐԵՆ ԴԱԿԹՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության  
ամբիոնի ասպիրանտ

### ՀՀ-ՈՒՄ ՉՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող գործընթացների տրամաբանությունը թելադրում է գյուղացիական տնտեսությունների խոշորացում կոոպերացիայի ձևավորման միջոցով: Հոդվածում անդրադարձ է կատարվել կոոպերատիվների կարևոր արժեքներին, սկզբունքներին, հիմնական ուղղություններին և կայացման գործընթացի հիմնախնդիրներին: Հիմնավորվել է Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի վարկավորման և գյուղատնտեսական կոոպերացիայի գործընթացների փոխադարձ դրական ազդեցությունը վերջինիս կայացման և զարգացման գործում՝ անհրաժեշտ վարկային միջոցների առկայությամբ և դրանց արդյունավետ տեղաբաշխման նպատակով գյուղացիական կոոպերատիվների ստեղծման միջոցով:

**Հիմնաբառեր.** գյուղատնտեսություն, կոոպերացիա, վարկավորում, կայացման գործընթաց, դրական ազդեցություն, զարգացում

JEL:Q1, Q14, Q17

Միջազգային կոոպերատիվի շարժմանն օժանդակող ամենահեղինակավոր կազմակերպությունը՝ Կոոպերատիվների միջազգային դաշինքը (ԿՄԴ՝ ICA), որը ստեղծվել է 1895 թ. և ներկայացնում է 95 երկրների 289 անդամ կազմակերպություններ, սահմանել է կոոպերատիվների ինքնությունը, արժեքները և սկզբունքները: Ըստ այդմ՝ կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերություն է, ովքեր կամավոր կերպով միավորվում են համատեղ

սեփականություն հանդիսացող և ժողովրդական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար:

Այլ կերպ ասած՝ կոոպերատիվը մասնավոր ձեռնարկատիրության առանձնահատուկ ձև է, որը պատկանում է իր անդամներին, ենթակա է նրանց կողմից համատեղ վերահսկողության և ծառայություններ ու ապրանքներ է մատուցում նրանց:

Գյուղատնտեսական կոոպերատիվի սահմանումն ընդգծում է կոոպերատիվի՝ որպես ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կարգավիճակով ինքնավար, տնտեսական, անդամների հետ փոխադարձ նպատակներ ունեցող կազմակերպության գործունեությունը: Ընդ որում, կոոպերատիվի փոխադարձ նպատակը ապրանքների և ծառայությունների մատակարարման միջոցով անդամների շահերի բավարարումն է: Տվյալ դեպքում անդամները հանդես են գալիս որպես սպառողներ և /կամ/ մատակարարներ: Կոոպերատիվի անդամները դրա գործունեությանը մասնակցում են որպես փայատերեր:

Տնտեսությունների խոշորացումը կոոպերացման, հողի շուկայի ակտիվացման միջոցով անհրաժեշտ է ոչ միայն գյուղաբնակներին, այլ նաև միասնացման գործընթացների խթանման և երկրի մակրոտնտեսական կայունացման համար՝ ներառելով տեղական արտադրողների և պարենամթերքի ներքին շուկայի պաշտպանության հիմնախնդիրը:

Գյուղատնտեսական կոոպերացիան կարևոր դերակատարում կարող է ունենալ գյուղատնտեսության հարակից խնդիրների լուծման գործում՝ նպաստելով գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և բնակավայրերի ամրապնդմանը, գյուղական համայնքներում ֆինանսական լարվածության թուլացմանը:

«Գյուղատնտեսության արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացման և կոոպերատիվների կայացման գործընթացի հիմնախնդիրներից են.

- կոոպերացիային առնչվող օրենսդրական և իրավական դաշտի անկատարությունը,
- գյուղատնտեսության ոլորտում բերքի ապահովագրության համակարգի բացակայությունը,
- գյուղատնտեսության ֆինանսավորման անհրաժեշտ միջոցների սղությունը,
- կոոպերատիվների գործունեության նպաստավոր պայմանների և խթանիչ միջոցառումների ոչ բավարար լինելը,
- կոոպերատիվների անհրաժեշտության վերաբերյալ բնակչության մոտ ձևավորված թյուր կարծիքը, անվստահության մթնոլորտը,
- գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման, անհրաժեշտ ծառայությունների որակյալ մատուցման նպատակով պետական և մասնավոր հատվածների համագործակցության ոչ բավարար մակարդակը,
- գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման նպատակով համապատասխան կառույցների կողմից կատարվող աշխատանքների և ֆինանսական ներդրումների անբավարար մակարդակը:

Վերոնշյալ խնդիրների լուծման հրատապությունից ելնելով՝ ներկայումս մեր երկրի գյուղատնտեսության բնագավառի զարգացման հրամայական է դառնում կոոպերացման գործընթացի զարգացումը:

Պատահական չէ, որ ՀՀ կառավարության 2016 թ. հոկտեմբերի 18-ի թիվ 1060-Ա որոշմամբ հստակ անդրադարձ կա գյուղատնտեսական տնտեսությունների կոոպերացիայի խթանման ուղղությամբ միջոցառումների իրականացման վերաբերյալ, որտեղ նաև նշված է կոոպերատիվների անդամ տնտեսություններում կաթի արտադրության ծավալների մեծացման և որակական հատկանիշների բարելավման համար կոոպերատիվներին հավաքման սառնարանային կետերի և վերամշակման արտադրամասերի կառուցմանն աջակցություն ցուցաբերելու մասին<sup>1</sup>:

Դեռևս 2012 թ. նշակվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգի» նախագիծը, որում հստակեցվել են գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանման քաղաքականության հիմնական ուղղությունները: Արդյունքում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը: Միաժամանակ, համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակներում ստեղծվել է արոտագտագործողների սպառողական 54 կոոպերատիվ, որոնցից 49-ը պաշտոնապես գրանցվել են:

Սկզբնական շրջանում տարբեր մասնագիտացմամբ կոոպերատիվները հիմնականում ձևավորվել են միջազգային կազմակերպությունների և վարկային ծրագրերի աջակցությամբ:

Վերոնշյալ ծրագրերը գլխավորապես իրագործվել են ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի, ԱՄՆ-ի գյուղատնտեսական դեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագրի, «ՕԲՍՖԱՍ» և այլ կազմակերպությունների աջակցությամբ:

Այս իրավիճակում գործող կոոպերատիվների գործունեությունն ունի սահմանափակ բնույթ, չի բխում երկրի պարենային անվտանգության ապահովման շահերից: Մեր երկրում կոոպերատիվների կայացման գործում զգալի ներդրում ունի 2001 թ. հիմնադրված «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը:

Հայաստանի ագրոպարենային ոլորտի զարգացման նպատակով ֆինանսատեխնիկական աջակցություն է ցուցաբերվել վարկային, մարքեթինգային, գիտասփյուռ կրթական, կիրառական և ուսուցողական ծրագրերի միջոցով: Դրանք նպաստել են նաև կոոպերացիայի զարգացմանը:

Վերջին տարիներին կոոպերատիվների կազմակերպման և զարգացման գործում մեծ ավանդ ունի Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (ՀԳՌԿՄ) ծրագիրը, որի հիմնական նպատակն է արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականության մեծացումն ու կայունության ապահովումը: Այս ծրագրի գործողության ժամկետն է 2011–2016 թթ.:

ՀԳՌԿՄ առաջին ծրագրով հանրապետության 6 մարզերում ստեղծվել են շուրջ 61 արոտագտագործողների սպառողական կոոպերատիվներ: Երկրորդ ծրագրով, որը ներառում է հանրապետության 8 մարզ, 2015 թ. ստեղծ-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Եր., 2016 թ., հոկտեմբեր, էջ 13:

վել են 30 արտոագտագործողների սպառողական կոոպերատիվներ, որոնց մատակարարվել է 550 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 124 անվավոր տրակտոր: Ծրագրի իրականացման արդյունքում գրանցվել է անասնապահական մթերքի աճ: 2012 թ. համեմատությամբ, 2014 թ. իրացված միսը (կենդանի քաշով) աճել է 25.3%-ով, արտադրված կաթը ավելացել է 13.3%-ով: Այս արդյունքները հիմնականում գրանցվել են ՀԳՈԿՄ ծրագիրն իրականացրած մարզերում<sup>2</sup>:

Կոոպերատիվների ստեղծման և գործունեության նպատակն է՝ արտադրության, վերամշակման և իրացման խնդիրների լուծումը, արտադրության արդյունավետության բարձրացումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը, կոոպերատիվների անդամների եկամուտների ավելացումը և կոոպերացիայի զարգացման համար նպաստավոր միջավայրի ձևավորումը:

Կոոպերատիվների կայացման գործընթացի նկատմամբ պետության վարած քաղաքականությունը պետք է ներառի այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ պետական զնումներ կատարելիս կոոպերատիվներին տրվող արտոնությունները, մաքսային և հարկային արտոնությունները, տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման նպատակով լիզինգային ծառայությունների իրականացումը, օժանդակությունը մթերքների իրացման և շուկաների ձեռքբերման հարցերում և այլն:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման և սպառման նկատմամբ պահանջներն օբյեկտիվորեն, ժամանակին համահունչ փոփոխությունների են ենթարկվում. մեծանում է սպառողական պահանջարկը, նվազում է ռեսուրսների օգտագործման արտադրողականությունը: Այս իրավիճակում էլ ավելի է կարևորվում գյուղատնտեսական կոոպերացիայի դերը տարբեր գյուղացիական տնտեսությունների միջոցները և հնարավորությունները միավորելու, սոցիալ-տնտեսական խնդիրներն առավել արդյունավետ լուծելու նպատակով՝ միաժամանակ պահպանելով որոշումների կայացման ազատությունը և անկախ գործելակերպը:

Այս ամենին կարելի է հասնել ներդրումային համապատասխան դաշտի ձևավորման պարագայում: Խնդրի լուծման հասցեատերերն են միջազգային ֆինանսական կառույցները, պետական ֆինանսական միջոցները և մասնավոր հատվածի ներդրումները: Այս ենթատեքստում մեծ է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ինչպես առանձին գյուղացիական տնտեսություններին, այնպես էլ կոոպերատիվներում ներգրավվածներին մատչելի տոկոսադրույքով և հարմար պայմաններով վարկերի տրամադրումը:

Ներկայումս դանդաղ, սակայն որոշակի դրական տեղաշարժով ընթացող կոոպերատիվների ձևավորումը, բովանդակային առումով, երբեմն ճիշտ ուղղությամբ չի զարգացնում: Պատճառն այն է, որ հաճախ կոոպերատիվի հիմնումը ձևական բնույթ է կրում. ընդգրկվում են ընտանիքի անդամները, հարազատ-բարեկամները, ովքեր իրականում որևէ կերպ մասնակից չեն այդ աշխատանքներին՝ նպատակ ունենալով միջազգային կառույցներից կամ նորարարական առաջարկություններով հանդես եկող, նոր տեխնոլոգիաներ ներդնող կազմակերպություններից հարմար պայմաններով ֆինանսական միջոցներ ներգրավել կամ ծառայություններ ստանալ: Այս գործելակերպը գյուղացիական տնտեսությունների մեջ անվստահություն է առաջացնում կոոպե-

<sup>2</sup> Տե՛ս [www.minagro.am](http://www.minagro.am)

րացման գործընթացի նկատմամբ, և ֆերմերները լրջորեն չեն դիտարկում կոոպերատիվների ձևավորման արդյունքում այլ ֆերմերների հետ փոխհամագործակցությունից առաջացող տնտեսական շահը: Այստեղ մեծապես կարևորվում է պետական համապատասխան գերատեսչությունների դերը թե՛ օրենսդրական ու իրավական դաշտի կատարելագործման, թե՛ գործընթացի ճիշտ ուղղորդման և բացատրական աշխատանքների կատարման, թե՛ վերահսկման ու գործընթացի կանոնակարգման գործում:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների և գյուղացիական տնտեսությունների վարկավորման անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ մեր երկրում, ինչպես նաև անցումային տնտեսության պայմաններում գտնվող ցանկացած այլ պետությունում բացակայում է նոր ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ նախնական կապիտալը:

Վարկատու կազմակերպությունները գյուղատնտեսության ոլորտում տրամադրում են վարկեր ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց: Վարկավորման ծավալների (գումարային և հատկապես քանակային) գերակշիռ մասը կազմում են ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերը, որը տրամաբանական է հայաստանյան գյուղացիական տնտեսությունների՝ քանակով շատ և տնտեսական հնարավորություններով փոքր լինելու պարագայում:

Պետք է փաստել, որ թե՛ իրավաբանական, թե՛ ֆիզիկական անձանց տրամադրվող գյուղատնտեսական վարկերի պայմանները, համեմատած տնտեսության այլ ճյուղերի վարկավորման պայմանների և սպառողական նպատակով իրականացվող վարկավորման պայմանների հետ, ավելի բարենպաստ են, սակայն դեռևս հեռու են միջազգային շուկայում գյուղատնտեսության վարկավորման գծով ձևավորված սակագներից: Հայտնի է, որ 2011 թ. մինչև 2017 թ., «Կառավարությունը գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերը սուբսիդավորում էր 4–6%-ով՝ «Հրամով: Այս ոլորտում վարկերը տրամադրվում են նաև այլ ֆոնդերով՝ համեմատաբար ցածր տոկոսադրույքներով (միջինացված՝ 13–15%-ով՝ «Հրամով): Գյուղացիական տնտեսությունները նախընտրում են վարկավորվել որպես ֆիզիկական անձ, ապա նոր ներդրում կատարել կոոպերատիվի մեջ, քան համաձայնություն տալ, որ կոոպերատիվը վարկավորվի որպես իրավաբանական անձ: Պատճառը կոոպերատիվի անդամների միջև վստահության ու փոխհամագործակցության դեռևս ցածր մակարդակն է:

Կոոպերատիվները, որպես իրավաբանական անձ, հիմնականում վարկավորվել են տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ լիզինգային ծառայություն ստանալու միջոցով:

Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիայի կայացման համար խիստ անհրաժեշտ են վարկային միջոցներ, իսկ գյուղատնտեսության բնագավառի վարկային միջոցների արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է գյուղական կոոպերատիվների առկայությունը:

Այսպիսով՝ կոոպերատիվ մոդելը կատալիզատորի կամ փրկարար օղակի դեր կարող է խաղալ Հայաստանի գյուղատնտեսությունը զարգացման նոր աստիճանի բարձրացնելու գործում:

### Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Եր., 2016 թ., հոկտեմբեր:
2. [www.minagro.am](http://www.minagro.am)

**СУРЕН ДАВТЯН**

Аспирант кафедры  
банковского дела и страхования АГЭУ

***Важность внедрения сельскохозяйственных кооперативов в Армении и необходимость кредитования для стимулирования его развития.*** – Логика процессов, происходящих в сельскохозяйственном секторе, указывает на необходимость укрупнения фермерских хозяйств посредством внедрения механизмов сельскохозяйственной кооперации. В статье рассматриваются преимущества кооперации, основные направления и проблемы, стоящие на пути сельскохозяйственной кооперации. В статье обосновывается прямая положительная взаимозависимость между уровнем сельскохозяйственной кооперации и сельхозкредитованием; в частности, наличие кредитных ресурсов, что имеет определяющее значение в деле становления сельскохозяйственной кооперации, которая, в свою очередь, способствует эффективному распределению кредитных средств в аграрном секторе.

**Ключевые слова:** сельское хозяйство, кооперация, кредитование, процесс изготовления, положительный эффект, развитие.

JEL:Q1, Q14, Q17

**SUREN DAVTYAN**

Post-graduate at the Chair of  
Banking and Insurance at ASUE

***The Importance of Introducing Agricultural Cooperatives in Armenia and the Need of Stimulating Its Advance.*** – The logic of the processes taking place in the agriculture sector dictates a consolidation of farms to form agricultural cooperatives. The article dwells upon the fundamental values, principles, main directions and issues in the process of the formation of agricultural cooperatives. The mutually positive impact of agricultural crediting and the processes of the creation of agricultural cooperatives have been substantiated due to the availability of the necessary credit resources for the establishment and development of agricultural cooperatives, aiming at the effective distribution of the credit resources available in the agriculture sector.

**Key words:** agriculture, cooperative, crediting, processes of creation, effective distribution, development.

JEL:Q1, Q14, Q17